Մեդիագրագիտությունը Մայրենիի դասաժամին

Երևան, Տիգրան Մեծի 67
Հեռ՝ 033 572100
https://kznakhimnadram.blogspot.com/

Կազմեց՝ Ստելլա Մկրտչյանը

Գեղարքունիքի մարզ, Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոց

Դասի թեման՝ Շառլ Ազնավուր

«Ազնավուրը Ազնավուրի մասին»

6-րդ դասարան

Նպատակը՝

- Զարգացնել սեփական տեքստեր ստեղծելու, մտքերն արտահայտելու կարողություններ
- Զարգացնել լեզվական, ինքնաճանաչողական, սոցիալական, մշակութային կարողունակություններ
- Ձևավորել անհրաժեշտ տեղեկությունը հավաստի աղբյուրներից հավաքելու, ստուգելու, կարծիքը փաստից տարբերելու, քննադատաբար վերլուծելու կարողություններ

Վերջնարդյունքները՝

- Արտահայտի գրագետ մտքեր, ձևակերպի գրագետ խոսք
- Համացանցից գտնի և ներկայացնի անհրաժեշտ տեղեկություն, վերլուծի և քննարկի այն և կիրառի իր աշխատանքներում
- Տարբերակի և առանձնացնի դասի կարևոր միտքը, ուղերձը
- Կարևորի մայրենի լեզվի դերը հաղորդակցման մեջ

Դասի ընթացքը

Քայլ 1. Դասարանը բաժանվում է խմբերի: Երեխաները հանդես են գալիս որպես լրագրողներ, որոնք պետք է կատարեն հետևյալ աշխատանքները՝ հավաքագրեն տարբեր նյութեր, ուսումնասիրեն, քննարկեն հավաքագրված փաստերը, համակարգեն, ամբողջացնեն, կազմեն սահիկներ և տեքստեր :

- **Առաջին խումբ-Շ**. Ազնավուրի «Ազնավուրը Ազնավուրի մասին» գրքից հետաքրքիր մտքերի ներկայացում /սահիկահանդես/ և դրանց միջոցով Շ. Ազնավուրի անհատականության բացահայտում:
- **Երկրորդ խումբ-** Շ. Ազնավուրի հռչակավոր դառնալու մասին տեղեկություններ /սահիկահանդես/:

Դասի ընթացքը

- **Երրորդ խումբ-** Համացանցից նյութեր քաղել Շ. Ազնավուրի, նրա պարգևների և նվաճումների մասին: Ներկայացնել սահիկների ուղեկցությամբ:
- **Չորրորդ խումբ-** Սահիկահանդես.նկարների դիտում, Շ. Ազնավուրի բանաստեղծություններից հատվածների ընթերցում, «Բոհեմ», «Ավե Մարիա», «Նրանք ընկան» երգերի ունկնդրում:
- **Հինգերորդ խումբ-** Իբրև մշակութային որևէ ամսագրի թղթակից՝ հարցազրույց վարել հոր բարեգործական գործունեությունը ստանձնած որդու՝ Նիկոլա Ազնավուրի հետ:

Քայլ 2.

Աշխատանքն ավելի ճիշտ ու արդյունավետ կազմակերպելու համար անցկացվում է զրույց-քննարկում հետևյալ հարցերի շուրջ.

- Ինչպիսի՞ն պետք է լինի լրագրողի նյութը:
- Ինչու՞ է անհրաժեշտ ստուգել տեղեկությունը:
- Ինչպե՞ս տարբերել կեղծ լուրերն ու ապատեղեկատվությունը:
- Ի՞նչ անել, եթե չի հաջողվել ստուգել տեղեկությունների հավաստիությունը:

Քայլ 3.

Ուսուցիչը ներկայացնում է «Ինչ է մեդիագրագիտությունը, ինչպես տարբերակել կեղծ լուրերն ու ապատեղեկատվությունը:

Քայլ 4.

Աշակերտները հավաքագրում են տարբեր նյութեր, ուսումնասիրում, քննարկում են հավաքագրված փաստերը, համակարգում, ամբողջացնում և կազմում են սահիկներ և տեքստեր:

Քայլ 5.

Սովորողները ներկայացնում են իրենց աշխատանքները

Անդրադարձ

Աշակերտները պետք է գրի առնեն երեք բան.

- Չէի անի, եթե լրագրող լինեի
- Չէի անի՝ բացառությամբ որոշակի դեպքերի
- Պարտավոր եմ անել

Տնային աշխատանք

«Եթե հանդիպեի Շ.Ազնավուրին, ի՞նչ կհարցնեի նրան»: Կազմել կապակցված խոսք

Օգտագործված գրականություն

1. Հանրակրթության պետական չափորոշիչ
2. Մայրենի. ծրագիր հանրակրթական դպրոցի 1-6-րդ դասարանների համար:
3. Մեդիա-ուսիտություն-մեդիագրագիտության ձեռնարկ
4. «Լիտերատուսի արկածները» փաստերի ստուգման կրթական համակարգչային խաղ:

- Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը՝ որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում: